ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ-ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

Հունիսի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը միջեկեղեցական եւ հովվապետական վեցօրյա այցով մեկնեց Վրաստան՝ հրավերով Վրաց Ուղղափառ եկեղեցու Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքի եւ Վիրահայոց թեմի թեմական խորհրդի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին այցի ընթացքում ուղեկցում էին Հայաստանի Աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալ Տ. Շահե աբեղա Անանյանը, տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քահանա Մելիքյանը, կաթողիկոսական գրասենյակի քարտուղար Տ. Ադամ քահանա Մակարյանը, ակադեմիկոս Նիկոլայ Հովհաննիսյանը եւ պրոֆ. Դավիթ Մուրադյանը:

Մինչ Բագրատաշեն հասնելը, Տավուշի մարզի սահմանին Հայոց Հայրապետին դիմավորեցին Տավուշի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Թորգոմ վարդապետ Տոնիկյանը եկեղեցականաց դասի ուղեկցությամբ եւ Տավուշի մարզային իշխանությունների ներկայացուցիչները՝ գլխավորությամբ մարզպետ Արմեն Ղուլարյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին Բագրատաշեն սահմանակետում դիմավորեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Ջավախքում ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տ. Բաբկեն աբեղա Սալբյանը, թեմի հոգեւոր դասը, Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը: Ազգային տարազներով զգեստավորված երիտասարդներ աղ ու հացով ողջունեցին Վեհափառ Հայրապետին: Այնուհետեւ վրացական Սադախլո անցակետում պատվիրակությանը դիմավորեց Նորին Սրբություն Իլիա Բ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքը՝ Վրաց Ուղղափառ եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականների, ինչպես նաեւ Թբիլիսիի ու Մառնեուլիի շրջանի սահմանամերձ հայ համայնքների ներկայացուցիչների ուղեկցությամբ:

Եղբայրական ողջագուրումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջույնի խոսքով դիմեց Իլիա Բ Պատրիարքին եւ ներկա ժողովրդին: «Մենք անչափ ուրախ ենք որ մեր մուտքը Վրաստան ողջունվում է այսպիսի ջերմությամբ վրաց եւ հայ հավատացյալների կողմից: Ձեր ժպտացող դեմքերն ու հայացքները խոսում են այն ուրախության մասին, որով դուք ընդառաջ եք եկել ձեր Հայրապետներին», - նշեց Նորին Սրբությունը: Ապա Իլիա Բ Պատրիարքը բարի գալուստ մաղթեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ անդրադառնալով երկու ժողովուրդների բարեկամությանը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Հայրապետի պատվիրակությունը եւ դիմավորողները մեկնեցին Թբիլիսի, ուր Սուրբ Երրորդություն (Սամեբա) Մայր տաճարում տեղի ունեցավ բարիգալստյան պաշտոնական արարողությունը, որին ներկա էին Հայ եւ Վրաց Եկեղեցիների բազում հավատացյալներ: Իրենց օրհնությունը բաշխելով տաճարի առջեւ հավաքված ժողովրդին եւ եկեղեցականությանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոսը շարականների երգեցողության ներքո մուտք գործեցին Ս. Երրորդություն եկեղեցի, ուր Վրաց Իլիա Բ Պատրիարքը վերստին ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Վրաստան:

Ներկա հոգեւոր դասին եւ բարեպաշտ ժողովրդին այս առիթով իր օրհնությունն ու պատգամը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Գոհություն հայտնելով Բարձրյալին հանդիպման համար՝ Նորին Սրբությունը մասնավորաբար նշեց. «Վրաստան ենք ուղեւորվել Ձեր հրավերով եւ Վիրահայոց թեմ Հովվապետական այց կատարելու համար: Ձերդ եղբայրության հետ աղոթական օրեր պիտի ապրենք հանդիպելով մեր եկեղեցիների հավատավոր զավակներին, այցելելով հայոց եւ վրաց եկեղեցիներ ու վանքեր: Պիտի քննարկենք երկուստեք մեր եկեղեցիներին հուզող հարցեր եւ խոսենք մեր համագործակցությունը զորացնելու հնարավորությունների մասին: Եկել ենք քաջալեր հոգով եւ հավատով, որ մեր հանդիպումը պիտի ամրապնդի դարերով վկայված եղբայրությունը եւ բարեկամությունը մեր ժողովուրդների եւ նոր առիթ դառնա պատասխաններ գտնելու մեր առջեւ այսօր հառնող հարցերին, հաղթահարելու մեր մտահոգություններն ու դժվարությունները՝ ի սեր այն մեկ եւ նույն հույսի, որին Աստված կոչեց մեզ:

Հունիսի 10-ի երեկոյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց նախագահական նստավայր, ուր տեղի ունեցավ Վրաստանի Հանրապետության նախագահ Միխայիլ Սահակաշվիլիի, Համայն Վրաստանի Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքի եւ Ամենայն Հայոց Հայրապետի հանդիպումը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին վիրահայությանը եւ Վիրահայոց թեմին հուզող հարցեր եւ խնդիրներ:

Հաջորդ օրը՝ հունիսի 11-ի առավոտյան Ամենայն Հայոց Կաթողիկոսը շքախմբի ուղեկցությամբ մեկնեց Վրաց Ուղղափառ Եկեղեցու պատրիարքարան, որտեղ տեղի ունեցավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Համայն Վրաստանի Պատրիարքի պաշտոնական հանդիպումը:

Ընդունելության ժամանակ փոխանակվեցին պաշտոնական ճառեր: Իր խոսքում Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց Վրաստան այցի առիթով, ապա անդրադարձ կատարեց երկու ժողովուրդների պատմական ընդհանրություններին եւ հայ-վրացական եկեղեցական հարաբերություններին: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը մասնավորաբար նշեց. «Արդարեւ, բազում են այն հոգեւոր, մշակութային եւ պատմական կապերը, որ միավորում են մեր ժողովուրդներին՝ հակառակ պատմական զարգացումների արդյունքում մեր եկեղեցիների միջեւ ի հայտ եկած դավանաբանական տարբերությունների: Հնագույն ժամանակներից մեր նախնիք ապրել ու արարել են կողք կողքի, խաղաղության եւ ազատության նույն հույսերն ունեցել, միմյանց աջակցել, միասնաբար պաշտպանել հայրենի տունը եւ քրիստոնեական սուրբ հավատքը: Առ Աստված ապավինությամբ, ամուր եւ

աներկբա հավատքով մեր ժողովուրդները դիմակայեցին նաեւ խորհրդային եկեղեցահալած ժամանակներին եւ այսօր վերահաստատել ու կառուցում են իրենց անկախ պետականությունը եւ պայծառացնում իրենց հոգեւոր կյանքը, որպեսզի, ինչպես սաղմոսերգուն է ասում, Տիրոջ օրհնությունը ճանաչող ժողովուրդը միշտ Նրա երեսի լույսով ընթանա, Նրա անվամբ ցնծա եւ Նրա արդարությամբ բարձրանա:

Հոգեւոր եւ ազգային կյանքի զարգացման նույն հույսերն ունենալով եւ ջանքեր ներդնելով, դժբախտաբար Մեր Եկեղեցին Վրաստանում շարունակում է կրել իր առաքելությանը խոչընդոտող դժվարություններ: Վիրահայոց թեմի վերջին քսան տարիների ցավալի կորուստներին անդրադարձ չկատարելով, լավատես՝ երեկ Վրաստանի նախագահի եւ Ձեզ հետ ունեցած զրույցից, կուզենայինք արտահայտել Մեր հավատը, որ Ձերդ Սրբության զորակցությամբ վճիռներ պիտի գտնեն թեմին իրավաբանական կարգավիճակ տալու եւ հայկական եկեղեցիները վերադարձնելու խնդիրները՝ ի նպաստ Վրաստանի հայ համայնքի հոգեւոր կյանքի պայծառության»:

Հանդիպման ընթացքում, ի հետեւումն Վրաստանի Հանրապետության նախագահի եւ Պատրիարքի հետ հունիսի 10-ին տեղի ունեցած զրույցի, ձեռք բերվեցին հետեւյալ պայմանավորվածությունները. իբրեւ առաջին քայլ Վիրահայոց թեմին առաջիկայում պետք է շնորհվի իրավական կարգավիճակ: Հավաստիացում կատարվեց նաեւ, որ փլուզված եւ փլուզման վտանգի ենթակա հայկական եկեղեցիների նկատմամբ պատշաճ խնամք եւ հոգատարություն պետք է դրսեւորվի մինչ դրանք կվերադարձվեն հայոց թեմին: Հաջորդ փուլում քննության կառնվի հայկական եկեղեցիների վերադարձը Հայ Առաքելական Եկեղեցու Վիրահայոց թեմին:

Հայոց Հայրապետի գլխավորած պատվիրակությունը Վրաց Ուղղափառ Եկեղեցում պաշտոնական հանդիպումից հետո այցելեց Ս. Նշան եւ Մուղնեցոց Ս. Գեւորգ եկեղեցիներ:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Թբիլիսիի Հայ զրողների եւ հասարակական գործիչների պանթեոն, ուր Նորին Սրբությունը ծաղիկներ դրեց Խոջիվանքի պանթեոնում թաղված հայ մտավորականների շիրիմներին, ապա կատարվեց հոգեհանգստյան արարողություն: Աղոթքից հետո Վեհափառ Հայրապետը իր օրհնությունը բերեց ներկա բազում հավատացյալներին: Նորին Սրբությունն անդրադարձավ Վրաստան կատարած իր այցի նպատակին. «Եկել ենք՝ մեր զավակներին բերելու օրհնություն Սուրբ Էջմիածնից, բերելու սեր ու կարոտ աշխարհասփյուռ մեր զավակներից, բերելու նաեւ մեր գնահատանքը ձեզ ամենքիդ, որ նախանձախնդիր կերպով ու հավատարիմ ձեր հայրերի սրբազան ավանդներին ու ժառանգությանը, ձեր հայրերի սուրբ հավատքին՝ շարունակում եք աշխույժ ու բարգավաճ պահել հայ կյանքը Վրաստանում: Այսօր մեզ համար հոգեկան անհուն միխիթարություն է, որ ձեզ հետ միասին մենք աղոթք բարձրացրեցինք հիշատակի առջեւ մեր ժողովրդի մեծանուն զավակների, ովքեր փառավոր էջերն են կերտել վիրահայոց պատմության, ինչպես նաեւ փառավոր էջեր հայ մշակույթի պատմության մեջ», - նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում:

Նույն օրը Վեհափառ Հայրապետն այցելեց Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանի նստավայր: Երեկոյան Թբիլիսիի Դավթյանների տիկնիկային թատրոնի տանը Նորին Սրբությունը հանդիպեց եւ իր օրհնությունը բերեց Թբիլիսիի

հայ մշակութային ներկայացուցիչներին: Հայ մշակույթի նվիրյալները Հայոց Հայրապետին դիմավորեցին ասմունքով, ինչպես նաև թատրոնի տնօրեն Ժաննա Դավթյանի կողմից բեմադրված ներկայացմամբ: Ջերմ զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Թբիլիսիի հարուստ եւ աշխույժ հայ մշակութային կյանքին, ինչպես նաև մշակութային եւ հասարակական գործիչների համագործակցությանը Վիրահայոց թեմի հետ:

Ըստ նախատեսված օրակարգի հունիսի 12-ին, Հոգեգալստյան տոնին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շքախմբի ուղեկցությամբ մեկնեց Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցի, որտեղ Վեհափառ Հայրապետին դիմավորեցին թեմի հոգեւոր դասը եւ Թբիլիսիի հայ համայնքի հազարավոր ներկայացուցիչներ:

Մինչ եկեղեցու վերաօծման արարողությունը Նորին Սրբության հանդիսապետությամբ կատարվեց եկեղեցու հարեւանությամբ կառուցված «Հայարտուն» կենտրոնի բացումը: Հովհաննես Թումանյանի կողմից 1921 թվականին հիմնադրված նշանավոր «Հայարտուն» կենտրոնը 1940-ականներին դադարել էր գործելուց: Սակայն 2011 թվականին Վիրահայոց թեմը հիմնադրում է համանուն կենտրոն՝ բարերարությամբ ռուսաստանաբնակ գործարար Բորիս Սահակովի եւ աջակցությամբ վիրահայ գործարարների:

Կենտրոնի մուտքի ժապավենը հատեցին տիար Բորիս Սահակովը եւ Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը, որից հետո այս առիթով իր ուրախությունը հայտնեց Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Սրբազանը՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը Հայրապետական օրհնության եւ թեմի նկատմամբ ցուցաբերվող մշտական հոգատարության եւ ուշադրության համար: Բացման առիթով Թբիլիսիի հայ համայնքին շնորհավորեցին արարողությանը ներկա Թբիլիսիի քաղաքապետ Գեորգի Ուգուլավան եւ Երեւանի քաղաքապետը: Իր սրտի խոսքն ասաց նաև կենտրոնի բարերարը՝ շնորհավորելով ամենքին կարեւոր այս ձեռնարկի առիթով: Վերջում ներկաներին իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը, շնորհավորելով հայ համայնքին կենտրոնի բացման առիթով, մաղթեց, որպեսզի այն դառնա հայաշունչ մշակութային, ազգային, հոգեւոր մի նոր օջախ՝ պահպանելով պատմական «Հայարտուն» կենտրոնի բարի ավանդները: Վեհափառ Հայրապետը, կենտրոնի հիմնումը նոր վկայություն նկատելով ազգային կյանքի վերազարթոնքի՝ հորդորեց վիրահայերին իրենց զավակներին առաջնորդել այդ կենտրոն եւ անաղարտ պահել ու պահպանել իրենց ավանդույթները, լեզուն ու հարուստ մշակույթը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր օրհնությունը բաշխելով բարեպաշտ ժողովրդին, «Հրաշափառի» ներքո մուտք գործեց Սուրբ Էջմիածին եկեղեցի, ուր հանդիսապետեց վերանորոգված տաճարի վերաօծման արարողությունը:

Թբիլիսիի Սուրբ Էջմիածին (Էջմիածնեցոց Սուրբ Գեորգ) եկեղեցին կառուցվել է 1805 թ. հայ հասարակության ծախսերով: Հիմնադրումից ի վեր այն բազմիցս վերակառուցվել եւ նորոգվել է: Փլուզման ենթակա եկեղեցին վերջին անգամ հիմնանորոգվեց 2006-2010 թթ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի բարեպաշտ հայորդիների աջակցությամբ:

Օծման արարողությունից հետո Նորին Սրբությունը Հայ Եկեղեցու «Ս.Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանով պարգեւատրեց «Հայարտուն» կենտրոնի բարերար Բորիս

Հանդիպում Վրաստանի նախագահի հետ նախագահական նստավայրում

Հանդիպում Պատրիարքական նստավայրում

Մուղնեցոց Սուրբ Գևորգ եկեղեցու պատերի մոտ

Թիֆլիսի Սուրբ Էջմիածին եկեղեցու վերաօծումը

Սահակովին՝ գնահատելով նրա եկեղեցասեր եւ ազգանվեր գործունեությունը: Ապա Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամը հղեց արարողությանը ներկա վիրահայությանը: Գոհություն հայտնելով Աստծուն՝ Վրաստանում հովվապետական այցելությամբ լինելու բերկրալի առիթի համար՝ Նորին Սրբությունն անդրադարձավ վիրահայության կյանքում նորաած տաճարի կարեւորությանը. «Հոգեւորոց այս պահին մեր մտածումները վերստին ուղղվում են դեպի մեզ բոլորիս հարազատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որտեղից շողում է Հայաստանը դեպի Աստված դարձրած լույսը, եւ սկիզբ են առնում մեր ժողովրդի հավատքը, քրիստոնեական կյանքի ուղին եւ սրբազան արժեքները: Այս արժեքներով սնված եւ էջմիածնադրոշմ հավատքով զորացած հավատավոր մեր հայրերը երկու դար առաջ կառուցեցին այս գեղեցիկ եկեղեցին եւ անվանեցին Սուրբ Էջմիածին, համոզումով, որ Սուրբ Էջմիածնի աստվածային անսպառելի լույսն է բաշխվում նվիրական այս աղոթավայրում:

Սուրբ Էջմիածինը, արդեն երկու դար շարունակ գտնվելով հայաշատ Հավլաբար թաղամասում, իր խնկաբույր կամարների ներքո է համախմբել Վիրահայոց թեմի հավատավոր հայորդիներին, ովքեր աղոթքը իրենց շուրթերին եւ հայրենական հիշատակներն իրենց հոգիներում՝ վրաց հողի վրա ապրել են խաղաղ ու ստեղծագործ ընթացքով եւ կազմակերպել ու խնամել իրենց համայնքային կյանքը: Ահավասիկ, Մեր հայրերի արդար աղոթքով ու քրտինքով շաղախված եկեղեցու օրհնությունը մեզ ուժ է տալիս եւ զորացնում մեզ մեր հավատքի մեջ՝ ջանք ու նվիրում բերելու եւ շեն ու պայծառ պահելու եկեղեցական եւ ազգային կյանքը, վերականգնելու խոնարհյալ մեր սրբավայրերը»: Եկեղեցու վերաօծման առիթով, ի գնահատություն թեմական առաջնորդի նվիրյալ ու ժրաջան ծառայության, Նորին Սրբությունը Վազգեն եպիսկոպոսին շնորհեց եպիսկոպոսական պանակ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր գնահատանքը հայտնեց եկեղեցու նորոգության գործին մեծ աջակցություն բերած ԱՄՆ Արեւմտյան թեմի բարեպաշտ հայորդիներին, իսկ նորաած Ս. Էջմիածին եկեղեցուն Նորին Սրբությունը նվիրեց Ս. Հաղորդության սկիհ:

Այնուհետեւ մատուցվեց հայրապետական Ս. Պատարագ, որից հետո ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի՝ առաջնորդարանի, «Հայարտուն» կենտրոնի հովանավորների եւ հայ համայնքի կողմից տրվեց պաշտոնական ճաշ, որին մասնակցում էին Վրաց Եկեղեցու ներկայացուցիչներ, տարբեր կրոնական համայնքների առաջնորդներ, Սամցխե-Ջավախքի եւ Քվեմո Քարթլիի պետական եւ կրթական կառույցների ներկայացուցիչներ, բազում հայորդիներ: Ճաշկերույթն ամփոփվեց Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով: Հովվապետական այցի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը օրհնության գրեր, հուշանվերներ շնորհեց մշակույթի անվանի գործիչներ Գիվի Շահնազարին եւ Անահիտ Բոստանջյանին, ինչպես նաեւ գործարարներ Սամվել Աղեկյանին, Ռաֆիկ Աղաջանյանին, Արամ Սիմոնյանին եւ Նելսոն Պետրոսյանին: Ամենայն Հայոց Հայրապետի մասնավոր գնահատանքի արժանացան նաեւ եկեղեցու շինարարներ Անատոլի Սոլոմոնաշվիլին եւ Զուրա Գաչեչիլաձեն:

Նույն օրվա երեկոյան Թբիլիսիում, ի պատիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Համայն Վրաստանի Պատրիարքի կողմից տրվեց պաշտոնական ընդունելություն, որին ներկա էին Վրաստանի պետական բարձրաստիճան այրեր, մտավորական-

ներ, Վրաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ եւ կրոնական համայնքների հոգեւոր առաջնորդներ:

Ընդունելության ընթացքում Վեհափառ Հայրապետը հանդես եկավ պաշտոնական խոսքով: Անդրադառնալով երկու ժողովուրդների հարաբերություններին՝ Նորին Սրբությունը նշեց, որ հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամության համար բոլոր ժամանակներում ամուր երաշխիք է հանդիսացել Վրաստանի հայ համայնքը՝ հայոց սփյուռքի հնագույն եւ ավանդաշատ համայնքներից մեկը, որը եղել ու մնում է հայ-վրացական համագործակցությանը թեւեր պարգեւող հիմնամուր կամուրջը: «Այսօր էլ Վրաստանի հայ զավակները, հավատարիմ իրենց նախնյաց մեծ վաստակին, որպես օրինապահ, արժանավոր քաղաքացիներ, նախանձախնդիր նվիրումով, պատասխանատվության եւ իրավունքի բարձր գիտակցությամբ վրաց ժողովրդի կողքին իրենց կարեւոր ներդրումն են բերում Վրաստանի կյանքի բարօրությանն ու առաջընթացին»:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը անդրադարձ կատարեց վիրահայությանը հուզող խնդիրներին: Տեղեկացնելով հունիսի 10-ին Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլիի հետ ունեցած հանդիպման մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպմանը քննարկված Վիրահայոց թեմի խնդիրների առնչությամբ մասնավորաբար նշեց. «Զրույցի ընթացքում հստակեցվեցին խնդիրների լուծման ուղիները: Իբրեւ առաջին քայլ՝ Վիրահայոց թեմին առաջիկայում կշնորհվի իրավաբանական կարգավիճակ, ինչպես եւ Հայաստանում վրաց եկեղեցական համայնքին, իսկ հաջորդ փուլում կքննարկվի եկեղեցիների վերադարձման խնդիրը: Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանում երբեւէ որեւէ խոչընդոտ չի եղել եւ չկա վրաց համայնքի գրանցման համար: Վրաստանի նախագահը նաեւ վստահեցրեց մեզ, որ անհրաժեշտ աշխատանքներ կիրականացվեն Վրաստանի մշակութային ժառանգության մաս հանդիսացող հայկական եկեղեցիների պահպանության եւ փլուզված եկեղեցու վերականգնման համար»:

Հունիսի 13-ին, Թիֆլիսի հայ համայնքին հրաժեշտ տալով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ Հայոց Եկեղեցու պատվիրակությունը մեկնեց Ջավախք: Սա վերջին հարյուրամյակում առաջին հովվապետական այցն է Ջավախք:

Վեհափառ Հայրապետը Վրաց Իլիա Բ Պատրիարքի հետ նախ հյուրընկալվեց Բորժոմիում՝ Վրաց Եկեղեցու Բորժոմիի եւ Բակուրիանիի թեմի առաջնորդ Սերաֆիմ արքեպիսկոպոս Ջոջուայի, Բորժոմիի շրջանային ժողովի նախագահ Բեսիկ Քուրդաձեի եւ Բորժոմիի շրջանային վարչության նախագահ Վախթանգ Մախուրաձեի կողմից, ապա մեքենաների շարասյունն ուղեւորվեց դեպի Ախալցիխե:

Քաղաքի մուտքին երկու Եկեղեցիների հովվապետներին դիմավորեցին Սամցխե-Ջավախքի նահանգապետ Լաշա Ճկադուան, Ախալցիխեի շրջանային ժողովի նախագահ Մալխազ Գիքոշվիլին, Ախալցիխեի շրջանային վարչության նախագահ Գելա Դեմետրաձեն, Ջավախքում առաջնորդական ընդհանուր փոխանորդ Տ. Բարկեն արեղա Սալբյանը, փոխառաջնորդության հոգեւոր դասը, համայնքային գործիչներ: Ապա Հայոց Հայրապետի գլխավորած պատվիրակությունը մեկնեց քաղաքի կենտրոնական հրապարակ, ուր Համայն Վրաստանի Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իրենց պատգամը եւ օրհնությունը բաշխեցին հայ եւ վրաց հավատացյալներին:

Ախալցխայում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Վրաց Պատրիարքն այցելեցին նաեւ Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցի (ԺԹ դ.): Եկեղեցու պարիսպների մոտ երկու Հովվապետներին ազգային երաժշտության հնչյունների ներքո, երկու երկրների դրոշակներով դիմավորեցին հայ համայնքի ներկայացուցիչները: Ազգային տարազներով պատանիները աղ ու հաց մատուցեցին Վեհափառ Հայրապետին եւ Վրաց Պատրիարքին: Այնուհետեւ «Հրաշափառով» հոգեւորականների թափորը մուտք գործեց եկեղեցի: Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց գոհաբանական աղոթք, ապա բարեպաշտ ջավախահայերին հայրական իր պատգամն ուղղեց Գարեգին Բ Հայոց Հայրապետը: «Ուրախ ու քաջալեր ենք տեսնելով, որ դուք շարունակում եք դարեր ի վեր Ջավախքում ապրած ձեր հայրերի հավատավոր եւ ազգասեր ուղին՝ ձեր սրտերում անսասան պահելով հավատարմությունը մեր Սուրբ Եկեղեցուն, նախանձախնդիր լինելով ազգային մեր արժեքների հանդեպ եւ պահպանելով մեր հին ու հարուստ մշակույթը,

Ապա հավատացյալներին իր օրհնությունը բաշխեց նաեւ Համայն Վրաստանի Պատրիարքը: Իր խոսքում վրաց հովվապետը պատմական նկատեց Վեհափառ Հայրապետի այցը, ինչպես նաեւ շեշտեց վիրահայ համայնքի կարեւոր դերակատարությունը Վրաստանի կյանքի տարբեր ոլորտներում:

Այցի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն նվիրեց Ս. Աստվածամոր պատկեր:

Արարողությունից հետո պատվիրակությունը մեկնեց Ախալցիխեի Հովհաննես Թումանյանի անվան թիվ 3 հայկական դպրոց, ուր Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը եւ Իլիա Բ Կաթողիկոսը ներկա գտնվեցին աշակերտների պատրաստած գրական-երաժշտական հանդիսության: Միջոցառման ավարտին երկու Եկեղեցիների հովվապետներին ողջունեց դպրոցի տնօրեն Սվետլանա Հարությունյանը: Վերջում ներկա աշակերտներին եւ ուսուցիչներին իր օրհնությունը բերեց Վեհափառ Հայրապետը՝ պատգամելով իրրեւ գանձարան փայփայել իրենց դպրոցը:

Հունիսի 14-ի առավոտյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, շարունակելով հովվապետական այցը Ջավախք, մեկնեց Ծուղրութ գյուղ, որի Ս. Սիոն եկեղեցում պահվում է Ծուղրութի նշանավոր Ավետարանը: Ձեռագիր Ավետարանը համբուրելուց հետո Նորին Սրբությունը աղոթք բարձրացրեց Ջավախքի հայորդիների համար, ապա իր օրհնությունն ու պատգամը բերեց ներկա ծուղրութցիներին:

«Մենք փառք ենք տալիս Աստծուն, որ մեր զավակներն այսքան նախանձախնդիր են մեր Եկեղեցու նկատմամբ, իրենց հայրերի սուրբ հավատքի եւ ազգային մեր ժառանգության նկատմամբ եւ մայրենի լեզուն խնամում եւ գուրգուրում են, պահում ու պահպանում են իրենց զավակների շուրթերի վրա», - նշեց Հայոց Հայրապետը՝ մաղթելով ծուղրութցիներին շարունակել աստվածասեր ու ազգանվեր ընթացքը եւ ապրել որպես հայ ժողովրդի արժանավոր զավակներ:

Նույն օրը հայոց պատվիրակությունն այցելեց Վրաց Եկեղեցու Ախալցիխեի եւ Տառ-Կլարջեթիի թեմի առաջնորդարան, ապա Հայրապետական շքախումբն Ախալցիխեից ուղեւորվեց Ախալքալակ:

Մինչ Ախալքալակ ժամանումը պատվիրակությունը կանգ առավ Ասպինձայի շրջկենտ-

բոնում, որտեղ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Համայն Վրաստանի Պատրիարքին դիմավորեցին շրջանային վարչության նախագահ Բեսո Բեքաուրին, Դամալա գյուղի համայնքապետ Գուրգեն Թումասյանը, Դամալայի հայ համայնքի եւ Ասպինձայի վրաց բնակչության ներկայացուցիչներ:

Շրջկենտրոնի հրապարակում հավաքված Ասպինձայի եւ Դամալայի հազարավոր բնակիչների հետ հանդիպման ընթացքում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատմական այցը Ջավախք ողջունեց Իլիա Բ Վրաց Պատրիարքը: Ապա Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունը ներկա ժողովրդին փոխանցեց Վեհափառ Հայրապետը:

«Դեպի ձեզ եկանք գոհության աղոթքով, ուրախ սրտով, քաջալեր հոգով, եւ ահա տեսնում ենք հավատավոր ձեր հոգու խանդավառությունը, սերն ու հավատարմությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ, որով համախմբվել եք այստեղ՝ դիմավորելու Հայոց եւ Վրաց Հայրապետներին», - ասաց Նորին Սրբությունը:

Ախալքալակ քաղաքի մուտքին երկու եկեղեցիների պետերին դիմավորեցին տեղական իշխանության մարմինների ներկայացուցիչները՝ Ախալքալակի շրջանային ժողովի նախագահ Համլետ Մովսիսյանը, Ախալքալակի շրջանային վարչության նախագահ Նաիրի Իրիցյանը, Ախալքալակի շրջանի ոստիկանապետ Սամվել Պետրոսյանը, Ջավախքում առաջնորդական ընդհանուր փոխանորդ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը, Ախալքալակի եւ Գումբուրդոյի առաջնորդ Նիկոլոզ միտրոպոլիտ Փաչուաշվիլին:

Ճաշակելով մատուցված աղ ու հացը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Վրաց Պատրիարքը ուղեւորվեցին հայկական Ս. Խաչ եկեղեցի: Եկեղեցուն հարակից հրապարակում հավաքված հազարավոր հայորդիները դիմավորեցին իրենց Հայրապետին ազգային երաժշտությամբ, ծափողջույններով ու բարեմաղթանքներով: Օրհնելով ժողովրդին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Վրաց Պատրիարքն առաջնորդվեցին Ս. Խաչ եկեղեցի, որտեղ Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց գոհաբանական աղոթք: Ապա Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սրբալույս Մյուռոնով օծեց եկեղեցու բակում Ջավախք հովվապետական այցելության առիթով կանգնեցված խաչքարը:

Օծման արարողությունից հետո հրապարակում կառուցված բեմահարթակից երկու Եկեղեցիների պետերն օրհնության խոսքով դիմեցին ներկա ժողովրդին: «Ավելի քան մեկ դար է անցել այն օրերից, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա Վեհափառ Հայրապետն այցելեց սրբուհի Նունեի ոտնահետքերը կրող այս օրհնյալ երկրամասը՝ իր Հայրապետական օրհնությունը սփռելով հայության համընդհանուր ոգեւորության ու ցնծության մթնոլորտում: Այսօր էլ Մենք երջանկությունն ունենք այցելելու Ջավախքի հավատավոր Մեր զավակներիդ եւ հայոց ոսկեղենիկ լեզվով դիմելու ձեզ, որով հայ հովիվները խոսել են Սուրբ Նունեի հետ, եւ փառաբանելու Աստծուն իր բոլոր շնորհների համար, փառաբանելու մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որ այցելել է նաեւ հայ ու վրաց ժողովուրդներին, Իր Սուրբ Ավետարանով, Իր սրբերի վկայություններով հաստատել հավատքի մեջ, զորացրել ու շնորհազարդել արարումի մեջ եւ դարերի փորձությունների մեջ խնամել ու ապրեցրել փրկության հույսով: Դիմում ենք ձեզ նաեւ Մեր երջանկահիշատակ նախորդների փոխարեն, ովքեր ցանկանալով ցանկացան այցելել Ջավախք, սակայն հանգամանքները թույլատու չեղան»,- ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբությունը Ս. Խաչ եկեղեցուն նվիրեց Ս. Աստվածամոր պատկեր, իսկ Ջա-

վախքի առաջնորդական ընդհանուր փոխանորդ Հայր Բաբկենի կուրծքը զարդարեց լանջախաչով՝ գնահատելով նրա նվիրյալ ծառայությունը:

Իլիա Պատրիարքը եւս Ս. Գեւորգի սրբապատկեր ընծայեց եկեղեցուն:

Այնուհետեւ Համայն Վրաստանի Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեցին Ս. Միքայել վրացական եկեղեցի:

Նույն օրը երեկոյան Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետն այցելեց Ախալքալակի թիվ 2 եւ թիվ 4 դպրոցները, ուր հանդիպումներ ունեցավ ուսուցիչների հետ, ինչպես նաեւ ներկա գտնվեց այցի առիթով կազմակերպված գեղարվեստական երեկոյին:

Հունիսի 15-ին՝ հովապետական այցի վերջին օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Ջավախքի մի շարք հայաբնակ շրջաններ:

Առավոտյան Սամցխե-Ջավախքի Ընդհանուր առաջնորդական փոխանորդության առաջնորդարան այցելելուց հետո պատվիրակությունն ուղեւորվեց Նինոծմինդա: Քաղաքի մատույցներում Հայ եւ Վրաց Եկեղեցիների հովվապետներին ողջունեց տեղի ղեկավարությունը՝ գլխավորությամբ Նինոծմինդայի շրջանային ժողովի նախագահ Վլադիմիր Ստամբոլցյանի եւ Նինոծմինդայի շրջանային վարչության նախագահ Սամսոն Փնջոյանի, հոգեւոր դասը եւ համայնքային գործիչներ, քաղաքի կենտրոնական հրապարակում տեղի ունեցավ հանդիպում ժողովրդի հետ, որտեղ ներկաներին իրենց պատգամը հղեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Վրաց Պատրիարքը: Այցի առիթով կազմակերպվել էր նաեւ ժողովրդական տոնախմբություն:

«Ուրախ ենք մեծապես, որ Սամցխե-Ջավախքում եկեղեցասեր ու ազգասեր հայորդիներդ հաստատուն ու անխաթար եք պահում հավատավոր կյանքը՝ խարսխված ազգային մեր նվիրական արժեքներին, մեր լույս հավատքին, մեր Սուրբ Եկեղեցուն: Տեղյակ ենք, որ ձեր ազնիվ աշխատանքով ջանքեր եք բերում Վրաստանի առաջընթացին, նպաստում երկրում բարօրության ու վերազարթոնքի համար իրականացվող ծրագրերին ու գործընթացներին: Սիրելիներ, գիտենք նաեւ, թե ինչպիսի տոկունությամբ եք դիմագրավում տարբեր մարտահրավերներ ու դժվարություններ, որոնց մեջ, սակայն, վառ եք պահում հույսն ու լավատեսությունը, առավել շեն ու բարօր կյանք կերտելու վճռականությունը», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ ընդգծելով, որ աշխարհասփյուռ հայ ժողովուրդը, ինչպես ամենուր, Վրաստանում եւս, վկայեց, որ հայությունը, իր հոգում միշտ պայծառ է պահում հավատքի աստվածապարգեւ լույսը, որը միշտ ճառագում է հավատացյալի սրտում, եւ երբեք չի դադարում հայ հավատացյալի եւ հոգեւորականի աղոթքը, չի պարպվում հույսն ու սերը, չի լռում հայալեզու խոսքը:

Ժողովրդի հետ հանդիպումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքն եղան Խոջաբեկի Սուրբ Սարգիս հայկական եկեղեցում, որտեղ կատարվեց համատեղ մաղթանք-աղոթք:

Այնուհետեւ ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղի իշխանությունների կողմից Նինոծմինդայում տրվեց պաշտոնական ճաշ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը օրհնության գիր շնորհեց մշակույթի անվանի գործիչ Ժորա Սնխչյանին, գործարարներ Արամ Սանոսյանին եւ Արմեն Ղարսլյանին:

Այնուհետեւ Հայրապետական շքախումբն ուղեւորվեց դեպի Վահան Տերյանի ծննդա-

վայր Գանձա գյուղ: Ճանապարհին պատվիրակությունը կանգ առավ Սաթխա գյուղի հերոսամարտի Խաչքարի եւ 1989 թվականի ապրիլի 9-ի հիշատակի հուշարձանի մոտ: Վեհափառ Հայրապետը ծաղիկներ դրեց հուշակոթողին, կատարվեց հոգեհանգստյան աղոթք, ապա Նորին Սրբությունն իր պատգամը հղեց հավաքված հարյուրավոր հայորդիներին:

Գանձա գյուղում Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախ այցելեց Սուրբ Կարապետ հայկական եկեղեցի՝ իր օրհնությունը բերելով եկեղեցու կամարների ներքո խմբված ժողովրդին, ապա եղավ Վահան Տերյանի տուն-թանգարանում:

Նինոծմինդայի շրջանի հայրապետական այցելության ավարտին շարասյունն ուղեւորվեց դեպի Ծալկայի շրջան: Ծալկայի շրջանի Այազմա գյուղում, հակառակ հորդառատ անձրեւին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին մեծ խանդավառությամբ ողջունեցին Ծալկայի հայությունը եւ տեղի իշխանությունները: Հանդիպման առիթով Հայոց Հայրապետին ողջունելու եկած ժողովրդին իր օրհնությունը բաշխեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Պատմական այս բնակավայրում, բնության գեղաշուք գրկում, հազարավոր հայորդիների ոգեշնչման աղբյուր հանդիսացած Փարվանա լճի մոտ հանգրվանած՝ դու՛ք, սիրելի՛ հավատավոր ժողովուրդ, անմասն չեք Վիրահայոց թեմում սկսված ազգային-եկեղեցական, մշակութային վերելքից: Այսօր Հայրապետիս սիրտն առանձնահատուկ ջերմությամբ եւ հոգեւոր զվարթությամբ է համակված, քանզի տեսնում ենք մեր Եկեղեցու հարազատ զավակներիդ հավատքի մեջ ամուր, հայրենական արժեքների հանդեպ նախանձախնդիր, ձեր տունը շենացնելու, հոգեւոր ու ազգային ձեր կյանքը զորացնելու նվիրումով լեցուն եւ բարի հույսով՝ դեպի ապագան: Ձեզ այստեղ համախմբել է սերը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ, հավատարմությունը ազգային ավանդներին եւ մշակույթին, որոնցով կրթվել ու դաստիարակվել եք եւ որոնք ուզում եք փոխանցել ձեր զավակներին», - ասաց Նորին Սրբությունը՝ հորդորելով ջանք եւ եռանդ չխնայել՝ ազգային ինքնությունն ու արժանապատվությունը, հայրենի սրբազան ավանդները պահպանելու նախանձախնդրության մեջ:

Հանդիպումից հետո վրացական Ժդանովկա գյուղի սահմանակետում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Վրաց Պատրիարքը հրաժեշտ տվեցին միմյանց, նույն օրվա երեկոյան Ամենայն Հայոց Հայրապետն իր շքախմբով, ավարտելով միջեկեղեցական եւ հովվապետական այցը Վրաստան՝ վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին: